ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

24.03.2016թ.
280-ի 6

«Երևան Ջուր» ՓԲԸ-ի տնօրեն
պարոն Գոռ Գրիգորյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գրիգորյան,

Մեզ են դիմել Ծարավ Աղբյուր փողոցի (Ավան վարչական շրջան) նորակառույց շենքերի բնակիչները և խնդրել են իրենց օգնել տեղեկություններ ստանալու հարցում.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Շենքերի ջրամատակարարումն ապահովող պոմպերը գտնվու՞մ են արդյոք ԵրևանՋուր ՓԲԸ-ի հաշվեկշռում:
2. Ո՞վ է վճարում շենքերի ջրամատակարարումն ապահովող պոմպերի նորոգման և սպառած էլեկտրաէներգիայի ծախսերը՝ բնակիչները, թե ԵրևանՋուր ՓԲԸ-ն,
3. Ո՞ր իրավական ակտով (կոնկրետ ո՞ր հոդվածով) է կարգավորվում վերոնշյալ հարցը:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ Լիանա Դոյդոյան